ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 571-Ա

23 սեպտեմբերի 2026 թ.

ՄԱՐԱՏ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանի օգնական Մարատ Ղուրշուդյանին 2026 թվականի սեպտեմբերի 24-ին, մեկ օրով, գործուղել Սևան համայնք՝ Կովկասյան էլեկտրահաղորդակցման ցանց I-III (ՓՈՒԼ I+IIA) Ծրագրի շրջանակներում նախատեսվող հանրային լսմանը մասնակցելու նպատակով:

2. Հանձնարարել՝ Մարատ Ղուրշուդյանին երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 29-ը ներառյալ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին ներկայացնել տեղեկատվություն հանրային լսման վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

23.09.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ